

Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

* Ծր. 1 Յուլիս. — Ս. Գրիգորի Լուսառբչին (Էլմ ի վիրապէն)։ Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աստղատան Ս. Լուսառբչի խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգւ։ Տ. Թովմէի Վրդ. Մամուր։

— Նախատեսակին ի Ս. Գալոր նախագահեց Լուսառբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս։ Ապա, ըստ սովորութեան, երգուեցաւ «Տէր Աղորմեա»։

* Կիր. 2 Յուլիս. — Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Ս. Էջմիածնի։ Հանդիսաւոր Ս. Պատարազ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աստղատան վրայ։ Ժամարարն էր Հոգւ։ Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան։ Ս. Պատարազի ընթացքին կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք», նախագահութեամբ Լուսառբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի։

— Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդառան»։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս։

* Կիր. 9 Յուլիս. — Բարեկենդան Ս. Լուսառբչի Պանոց։ Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գալորութիւն, Ս. Լուսառբչի եկեղեցիին մէջ։ Ժամարարն էր Հոգւ։ Տ. Զարէն Արդ. Թովմէան։

* Ուր. 14 Յուլիս. — Նախատեսակին ի Ս. Գալոր նախագահեց Լուսառբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս։

* Ծր. 15 Յուլիս. — Գիւտ Նշխարաց Ս. Զօրն մերոյ Գրիգորի Լուսառբչին։ Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատարն մէջ, ուր, ըստ աւանդութեան, ամփոփուած է նշխար մը Ս. Լուսառբչի մատուցէն։ Ժամարարն էր Հոգւ։ Տ. Պարէտ Արդ. Երէջեան։

* Դշ. 19 Յուլիս. — Թարգմանչաց Հանդիսաւոր նախատեսակին ի Ս. Գալոր նախագահեց Լուսառբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս։

* Եշ. 20 Յուլիս. — Ս. Բարգմանչաց Վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն ազգային)։ Ըստ սովորութեան, Ս. Պատարազ մատուց Ս. Թարգմանչաց Երկրորդ Վարժարանի Տեսուչը՝ Հոգւ։ Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գարեկեան։

* Ծր. 22 Յուլիս. — Նախատեսակին ի Ս. Գալոր նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս։

* Կիր. 23 Յուլիս. — Գիւտ Տփոյ Ս. Աստուածամկն։ Ս. Պատարազը մատուցուեցաւ Գեթեմանիի Ս. Աստուածամկն Տաճարին մէջ, Տէրամօր Ս. Գերշ. Լեզմանի վրայ։ Ժամարարն էր Տաճարին Տեսուչը՝ Հոգւ։ Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան։ Երթուղարձի Թափօրնէրուն նախագահեց Լուսառբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս։

* Ուր. 28 Յուլիս. — Նախատեսակին ի Ս. Գալոր նախագահեց Լուսառբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս։

* Ծր. 29 Յուլիս. — Ս. Երկոտասան առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի՝ երեւոյսաներորդ առաքելոյն։ Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոս վերամատարն մէջ։ Ժամարարն էր Հոգւ։ Տ. Արշէն Արդ. Այադեան։

* Կիր. 30 Յուլիս. — Բարեկենդան Վարդապետի Պանոց։ Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գալորութիւն, Ս. Լուսառբչի եկեղեցիին մէջ։ Ժամարարն էր Հոգւ։ Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գարեկեան։ Քարոզեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս, ընտրան ունենալով «Արդարութիւն եւ խաղաղութիւն» համարութեանը սաղմոսին խօսքը, յայտնելով թէ խաղաղութիւնը չի կրնար տիրապետել հոն՝ ուր արդարութեան զգացումն ու զիտակցութիւնը կը բացակային։ Ս. Պատարազի ամբողջ արարողութիւնը, մօտ երկու ժամուան տևողութեամբ, առաջին անգամ ըլլալով ձայնասփռուեցաւ խորայնէն ուստի կայանէն։

* Ուր. 4 Օգոստ. — Նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատարն մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս։

* Ծր. 5 Օգոստ. — Յիշատակ Տապանակին։ Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատարն մէջ։ Ժամարարն էր Հոգւ։ Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան։

— Այլակերպութեան տօնի հանդիսաւոր նախատեսակին ի Ս. Գալոր նախագահեց Լուսառբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս։ Ապա կատարուեցաւ Տեսուչի կողմէ զանախաղութեան նուիրուած հանդիսութիւն։ Տեսուչը Ս. Արքեպիսկոպոսը զարգարուած էր այդ նպատակաւ։

— Իրիկնաղմէին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեղեցէի» եւ Հսկման կարգեր։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս։

* Կիր. 6 Օգոստ. — ՎԱՐԳԱՎԱՍԻ (Տօն Այլակերպութեան Տեսնմ)։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը՝ Մայր Տաճարի Աստղատան վրայ մատուց Լուսառբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս, ե ժարոզեց օրուան խորհուրդին շուրջ, եղբայրացնելով թէ Թարգմանչաց Վարժարանի լոյսը պէտք է որ հոգեպէս պայծառակերպէ նաեւ իւրաքանչիւր Քրիստոնէայ։

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդառան»։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս։

* Բշ. 7 Օգոստ. — Յիշատակ մեռելոց։ Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գիւտիկի։ Ժամարարն էր Հոգւ։ Տ. Պարէտ Արդ. Երէջեան։ Ապա, Հոգւ։ Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գարեկեանի նախագահութեամբ կատարուեցան հոգեհանգստեան կարգեր նախ Մայր Տաճարին մէջ, ապա զաւիթը՝ Երանաշուրջ Տ. Կիրեղ Պարբ. Հօր շիրմին վրայ, եւ ամենէն ետք, Թափօրնէրուն զնացքով, Զամ-Թաղի հասարակաց դերձմանատան մէջ։

* Ուր. 11 Օգոստ. — Նախատեսակին ի Ս. Գալոր նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս։

* Ծր. 12 Օգոստ. — Ս. Բաղդասի առաքելոյն մե-

րոյ եւ Սանդիտոյ կուսին: Ս. Պատարազը մատուցեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի ծառարան մէջ: Ժամադրան էր Հոգւ. Տ. Գովսէփ Վրդ. Մամուր:

* Բշ. 14 Օգոստ.— Այսօր սկսան Ս. Կոյսի Վերափոխման տօնը կանխող մեծնորեայ հանդիսաւոր Ս. Պատարազները Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տէրամօր Ս. Գերեզմանին վրայ, մասնակցութեամբ Հոգւ. Հայրերու եւ Ժառ. Վարժարանի բովանդակ ուսանողութեան:

* Կիր. 20 Օգոստ.— Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց: Ս. Պատարազը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տէրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամադրան էր Հոգւ. Տ. Պարէտ Արդ. Երէցեան: Եւսարտ Ս. Պատարազի, Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոսի նախագահութեամբ կատարուեցաւ «Յաղագործնէք» աւանդական արարողութիւնը:

* Ուր. 2* Օգոստ.— Նախատօնակր պաշտուեցաւ Մայր Տաճարին կից Ս. Էջմիածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս:

* Շր. 26 Օգոստ.— Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տէրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամադրան էր Հոգւ. Տ. Պարէտ Արդ. Երէցեան:

— Կէսօրէ ետք ժամը 3:30-ին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր զխաւորութեամբ, Միարանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Գեթսեմանի ձորը եւ «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման մեծահանգէս նախատօնակր: Գերեզմանիներին, նոյն Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեղեցի» եւ Հսկման կարգեր, ու ապա գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ: Հանդիսապետն էր Հոգւ. Տ. Կերեզ Մ. Վրդ. Գարիկեան: Արարողութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 10ին:

* Կիր. 27 Օգոստ.— ՎԵՐԱՓՈՒՈՒՄԸ Ս. ԱՍՏՈՒԱՄԱՆԻ: Առաւօտեան ժամը 6:30ին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր զխաւորութեամբ, Միարան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տէրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը մատուցաւ: Ս. Կոյսի Վերափոխման պարագաներուն շուրջ քարոզեց Հոգւ. Տ. Գովսէփ Վրդ. Մամուր, եպիսկոպոսական խոյր ի գլուխ: Ս. Պատարազն ետք Հոգւ. պատարազի Հայրը նախագահեց ՀԱՊԱՍՏԱՆԻՆ:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին կից Ս. Էջմիածին մատրան մէջ (Մայր Տաճարին մէջ նորոգութիւններ սկսած ըլլալուն) պաշտուեցան «Անդառան», երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ, հանդիսապետութեամբ Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս:

* Բշ. 28 Օգոստ.— Յիշատակ մեռելոց: Ս. Էջմիածին մատրան մէջ Ս. Պատարազը մատուցաւ Հոգւ. Տ. Գերեզ Վրդ. Նաղաբեան: Ապա Հոգւ. Տ. Կերեզ Մ. Վրդ. Նախագահութեամբ կատարուեցան հո-

գեանդատեան կարգեր, նախ եկեղեցւոյ մէջ, ապա գլխիթը: Երանանմար Հ. Կերեզ Պարք. Հօր շիրմին վրայ եւ ամենէն ետք, Թափօրական դիպացով, Զամ-Թաղի հասարակաց գերեզմանավայրին մէջ:

* Շր. 2 Սեպտ.— Է. օր Վերափոխման: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանի ձախակողմը դռնուոյ Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամադրան էր Հոգւ. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան:

* Բշ. 4 Սեպտ.— Նախատօնակին ի Ս. Եակոբ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Գշ. 5 Սեպտ.— Ս. Եովակիմայ եւ Աննայի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Գովսէփի գերեզմանին վրայ: Ընկալելով սովորութեան համաձայն, արարողութեանց հանդիսապետն էր ժամօրհնողը՝ Հոգւ. Տ. Գովսէփ Վրդ. Մամուր, իսկ պատարազիչը՝ Տաճարի Տեսուչը՝ Հոգւ. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան:

* Շր. 9 Սեպտ.— Նախատօնակին ի Ս. Եակոբ Նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս:

* Կիր. 10 Սեպտ.— Գիւտ Գօտոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տէրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամադրան էր Հոգւ. Տ. Ներսէս Վրդ. Բաղուշեան: Երթուղարձի Թափօրներուն նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս:

* Կիր. 17 Սեպտ.— Բարեկենդան Ս. Խաչի պահոց: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Եարութիւն, Ս. Լուսաօրիէ եկեղեցիին մէջ: Ժամադրան էր Հոգւ. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան:

* Գշ. 20 Սեպտ.— Նախատօնակին ի Ս. Եակոբ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Եշ. 21 Սեպտ.— Իմունդ Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսը զխաւորութեամբ, Միարան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տէրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը մատուցաւ Հոգւ. Տ. Կերեզ Մ. Վրդ. Գարիկեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ, եւ քարոզեց աւուր պատշաճի:

* Շր. 23 Սեպտ.— Տօն Եկեղեցւոյ ի Նաւակատիս Ս. Խաչին: Խաչկերացի մեծահանգէս նախատօնակին ի Ս. Եակոբ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս որ ապա Ս. Խաչափայտի մատուցը փոխադրեց Աւագ Սեղան:

— Իրեկնադէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեղեցի» եւ Հսկման կարգեր: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս:

* Կիր. 24 Սեպտ.— ՏՕՆ ՎԵՐԱՍՏԱՆ Ս. ԽԵՂՈՒՆ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցաւ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս եւ քարոզեց օրուան տօնին շուրջ, ծանրանալով Ս. Խաչին գերութենէն վերադարձի պարագաներուն վրայ: Ս. Պա-

տարազն է ետք, ընկալելու սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօնը՝ Ս. Աթուռոյ և ազգիս բարերար Կարապետ և Գրիգոր Մկեղանեան եղբայր հոգեհանգստեան համար:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Խաչփերացի մեծահանգէս Հանգուստանք: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

✱ Բշ. 25 Սեպտ. — Երևանի մեքենայ: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղբի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Պարէտ Արղ. Երէցեան: Ս. Պատարազէն ետք, Հոգշ. Տ. Կիրեղ Մ. Վրդ. Նախագահութեամբ, կատարուեցան հոգեհանգստեան կարգեր նախ Մայր Տաճարին մէջ, ապա դաւթի՝ Երանաշունք Տ. Կիրեղ Պարթ. Հօր շիրմին վրայ, և հուսկ ուրեմն, Թափօրական զնացքով, Չամ-Թաղի հասարակաց գերեզմանավայրին մէջ:

✱ Եր. 30 Սեպտ. — Տօն Խաչի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնամասրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. Նաղարեան:

✱ Կիր. 1 Հոկտ. — Բարեկենդան վարագայ Ս. Խաչի պահոց: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Երանութիւն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գովսէփ Վրդ. Մամուր:

✱ Ուր. 6 Հոկտ. — Նախատեսակը պաշտուեցաւ Ղազար Ս. Գեորգ Եկեղեցիին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս Քէմհանեան:

✱ Եր. 7 Հոկտ. — Ս. Գեորգի գործարարին: Ըստ սովորութեան, Ս. Պատարազը մատուցուեցաւ Ղազար Ս. Գեորգ Եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Զարեհ Արղ. Թովսեան: Քարոզեց Հոգշ. Տ. Դանիէլ Վրդ. Շամլեան, ներկայացնելով օրուան տօնելի երեք սուրբերուն կեանքն ու զործունէութիւնը, և յորդորելով հաստատելները որ աբրահամեան «հոգեւոր պատերազմ»ին մէջ, Ս. Գեորգը ունենալով իրենց իրրեւ մտատկար: Ս. Պատարազէն ետք Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ղազար Վանքի Տեղին: Երթուղարձի Թափօրները զրկուորեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս:

— Կէսօրէ ետք, վաղուան վարագայ Խաչի տօնին առիթով, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի զխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք զործեց Ս. Երանութեան Տաճար, ուր պաշտուեցան երկուշան ժամեր: Գովսէփն ու նախատեսակը՝ Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ: Ապա կատարուեցաւ Տօրեհանգստի Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Կիրեղ Մ. Վրդ. Գարեկեան:

✱ Կիր. 8 Հոկտ. — Տօն վարագայ Ս. Խաչի: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Երանութիւն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ: Ապա Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և Քարոզեց օրուան տօնին խորհուրդին շուրջ: Եւ Քարոզի, Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոսի նախա-

գահութեամբ, կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք»՝ Ն. Ս. Օժուրիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օժման 12րդ տարեկարմին առիթով, որուն ընթացքին ուրախ կը զօղանջէին Տաճարին հայկական զանգերը: Ս. Պատարազի մեծ մասը, ինչպէս նաեւ Քարոզի ու մաղթանքը մայրնապետեցան Երուսաղէմի առաքիպայանէն:

✱ Եր. 14 Հոկտ. — Ս. 72 աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին դաւթի, Ս. Գեորգի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սամուէլ Արղ. Աղոյեան:

✱ Կիր. 15 Հոկտ. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Երանութիւն: Ժամարարն էր Հոգշ. Տ. Զարեհ Արղ. Թովսեան:

✱ Ուր. 20 Հոկտ. — Թարգմանչաց հանդիսաւոր նախատեսակին ի Ս. Երանութիւն նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

✱ Եր. 21 Հոկտ. — Ս. Թարգմանչաց վարագայնացն մեքենայ (Տօն ազգային և Եկեղեցական): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարազեց և Քարոզեց Հոգշ. Տ. Կիրեղ Մ. Վրդ. Գարեկեան: Ան նախ անդրադարձաւ թէ այս օր տօն է նաեւ Ս. Աթուռոյ Գահակալ Ն. Ամենապատուութիւն Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս Տէրադեանին, որուն երկար կենաց և արեւատութեան համար յատուկ մաղթանքներ բար: Ապա յայտնեց թէ այս տօնը տօն է մասնաւորաբար Հայ ուսուցչին և աշակերտին, իրրեւ յաջորդները և իսկական Ժառանգորդները մեր մեծ Թարգմանիչներուն, որոնք շարունակուող են անոնց օրագրան առաքելութեան: Ըստ սովորութեան Ս. Պատարազէն ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթուռոյ և ազգիս մեծահոգի բարերար հանգուցեալ Գալուստ Կիւլպէնկեանին, ինչպէս նաեւ իր կողակցին և ծնողաց հոգեհանգստեան համար:

✱ Կիր. 22 Հոկտ. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Երանութիւն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապտիստեան:

✱ Եր. 28 Հոկտ. — Ս. Զորից Աւետարանչացն: Այսօրուան Ս. Պատարազը, որ սովորաբար կը մատուցուի Ս. Երանութեան Տաճարի դաւթի վրայ լացուող Ս. Յովհ. Աւետարանչի մատարան մէջ, մատուցուեցաւ ի Ս. Գլխաղբի, Ս. Երանութեան բակը նորոգութեանց շինութեանիւթերով լեցուն բլլալուն: Ժամարարն էր Հոգշ. Տ. Դանիէլ Վրդ. Շամլեան:

— Ս. Գովսէփ Աստուածաշոր տօնի նախատեսակին ի Ս. Երանութիւն նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս:

✱ Բշ. 30 Հոկտ. — Ս. Գովսէփայ Աստուածաւոր: Ըստ սովորութեան, Ս. Պատարազ մատուցուեցաւ Գերեզմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Գովսէփի զերեզմանին վրայ: Ժամարարն էր Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սամուէլ Արղ. Աղոյեան: Երթուղարձի Թափօրները զխաւորեց և հանդիսութեանց նախագահեց Ժամօրհնող Հոգշ. Տ. Գովսէփ Վրդ. Մամուր: